

ՏԵՂԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

- ✓ 2016թ. սեպտեմբերի 7-ին ՀՀ ԱՎԾ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի երկրորդ կարգի մասնագետ Ք. Հովհաննիսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Գյուղական զբոսաշրջության ինտեգրացված զարգացում» ծրագրի ստորագրման արարողությանը,
- ✓ 2016թ. սեպտեմբերի 7-ին ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Իրավունքների պաշտպանությունը երեխաների աչքերով» խորագրով աշխատաժողովին,
- ✓ 2016թ. սեպտեմբերի 14-ին ՀՀ ԱՎԾ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը և գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի գլխավոր մասնագետ Գ. Պետրոսյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Վիճակագրական խորհրդատվական կոմիտեի արտաքին և փոխադարձ առևտրի վիճակագրության գծով ենթակոմիտեի նիստին,
- ✓ 2016թ. սեպտեմբերի 15-ին ՀՀ ԱՎԾ վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ն. Մուշեղյանը, տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի պետ Գ. Թորոսյանը և գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Վիճակագրական խորհրդատվական կոմիտեի տնտեսական վիճակագրության գծով ենթակոմիտեի նիստին,
- ✓ 2016թ. սեպտեմբերի 16-ին ՀՀ ԱՎԾ ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիգյանը մասնակցել է ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Վիճակագրական խորհրդատվական կոմիտեի ֆինանսների վիճակագրության գծով ենթակոմիտեի նիստին,
- ✓ 2016թ. սեպտեմբերի 16-ին ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը, աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը և գների վիճակագրության և միջազգային

համադրումների բաժնի գլխավոր մասնագետ Գ. Պետրոսյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Վիճակագրական խորհրդատվական կոմիտեի ճյուղային և սոցիալ-ժողովրդագրության վիճակագրության գծով ենթակոմիտեի նիստին,

- ✓ 2016թ. սեպտեմբերի 16-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Հայաստանի կենսաթոշակային բարեփոխումների իրականացման ծրագրի» աջակցությամբ մշակված նախագծերի կլոր-սեղան քննարկմանը,
- ✓ 2016թ. սեպտեմբերի 16-ին ՀՀ ԱՎԾ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի պետ Ա. Առուշանյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Ընդլայնված պատրաստվածություն և չնախատեսված պլանավորում» խորագրով արտակարգ իրավիճակների տեխնիկական խմբի հանդիպմանը,
- ✓ 2016թ. սեպտեմբերի 26-ին ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույունջյանը, տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի պետ Ա. Առուշանյանը և ՀՀ ԱՎԾ «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրի ավագ վիճակագիր Դ. Մարտիրոսովան մասնակցել են ք. Երևանում կայացած «Երեխայի բարեկեցության չափում: Հայաստանում ոչ նյութական աղքատության չափումներ» խորագրով շնորհանդեսին,
- ✓ 2016թ. սեպտեմբերի 27-ին ՀՀ ԱՎԾ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղի զարգացման (ENPARD) ծրագրի շրջանակում Գործընկերների երրորդ համաժողովին,
- ✓ 2016թ. սեպտեմբերի 27-28-ը ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույունջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Ծերացման հիմնահարցերին նվիրված միջազգային գիտաժողովին,

- ✓ 2016թ. հոկտեմբերի 4-ին ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Գրիգորյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Մշակութային ժառանգության քաղաքականության գնահատման ուղեցույց մշակութային ժառանգության հատվածը Հայաստանում զարգացնելու համար» խորագրով կլոր-սեղան քննարկմանը,
- ✓ 2016թ. հոկտեմբերի 13-ին ՀՀ ԱՎԾ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը և վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Կ. Շահբազյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելու շրջանակներում Հայաստանի Հանրապետությանը տեխնիկական և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մասին» համաձայնագրի նպատակների իրագործման նկատմամբ հսկողություն և ՀՀ գործադիր իշխանության մարմինների փոխգործակցությունը համակարգելու նպատակով ստեղծված հատուկ աշխատանքային խմբի հանդիպմանը,
- ✓ 2016թ. հոկտեմբերի 12-13-ը ՀՀ ԱՎԾ ներքին աուդիտի վարչության պետ Ա. Մանանդյանը և «Կենսամակարդակի ամբողջացված հետազոտության» ենթաժրագրի կառավարիչ Ա. Խանգելդյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Ֆինանսական կառավարում և կարողությունների զարգացում» խորագրով երկօրյա դասընթացին,
- ✓ 2016թ. հոկտեմբերի 14-ին ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Հակոբյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Երեխայի համար առանցքային հանձնառություններ մարդասիրական գործողություններում» թեմայով աշխատաժողովին,
- ✓ 2016թ. հոկտեմբերի 20-ին ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագրի «Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընտրողական ընդհատումների տարածվածությունն ու պատճառները» հետազոտության իրականացման աշխատանքային հանդիպում-քննարկմանը,

- ✓ 2016թ. հոկտեմբերի 20-ին ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Գևորգյանը և Ա. Սաֆյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի թվով 16 աշխատակից մասնակցել են ք. Երևանում կայացած «Երեխայի աշխատանքի ազգային հետազոտություն» զեկույցի շնորհանդեսին,
- ✓ 2016թ. հոկտեմբերի 21-ին ՀՀ ԱՎԾ առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ Ա. Հարությունյանը և միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի առաջատար մասնագետ Ա. Խամոյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած «Ծառայությունների առևտուր» բանակցային խմբի հանդիպմանը,
- ✓ 2016թ. հոկտեմբերի 25-ին ՀՀ ԱՎԾ գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Մ. Երիցյանը և մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի գլխավոր մասնագետ Ն. Աստվածատուրովան մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած 2014թ. մայիսի 29-ի «Պայմանագիր Եվրասիական տնտեսական միության» բաժին XIII «Մակրոտնտեսական քաղաքականություն» և Հավելված №14-ում փոփոխություններ անելու վերաբերյալ ԵԱՏՄ անդամ-պետությունների փորձագետների խորհրդակցությանը,
- ✓ 2016թ. հոկտեմբերի 26-ին ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաշնի պետ Լ. Քալանթարյանը և սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Թուրինի գործընթաց 2016. գերակայությունների քննարկում և վավերացում» խորագրով աշխատաժողովին,
- ✓ 2016թ. հոկտեմբերի 27-29-ը ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Ծաղկաձորում կայացած Արդյունավետ համակարգում, համագործակցություն և հանրային իրազեկում հանուն երեխաների համար արդարադատության մատչելիության բարելավման Անչափահասների հարցերով արդարադատության խորհրդի նիստին,
- ✓ 2016թ. հոկտեմբերի 28-ին ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի ներքո Հայաստանի չորրորդ ազգային հաղորդագրության և երկամյա առաջընթացի երկրորդ զեկույցի պատրաստում» ՄԱԶԾ-ԳԷՖ/00096445 ծրագրի մեկնարկային սեմինարին,

- ✓ 2016թ. հոկտեմբերի 31-ին ՀՀ ԱՎԾ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի գլխավոր մասնագետ Ն. Աստվածատուրովան և վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Լ. Բեյբությանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած «ԵԱՏՄ ինտեգրացիոն ներուժի զարգացման և գնահատման համար «Ծախսեր-թողարկում» աղյուսակների պետական և միջպետական օգտագործում» խորագրով փորձագիտական խմբի 4-րդ նիստ և «Ներմուծվող ապրանքների օգտագործման մատրիցայի կազմման համար անդամ-պետությունների փորձը և միջազգային մեթոդաբանությունը» թեմայով «Ծախսեր-թողարկում» ազգային աղյուսակների համակարգի մեթոդաբանության ձևավորման փորձի փախանակման վերաբերյալ սեմինարին: